



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11
էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 022

« 23 » Դեկտեմբերի 2014թ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի
Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական
կենտրոնի Կենդանաբանության ինստիտուտի տնօրեն
պարոն Գ. Բոյախյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բոյախյան

Դեռ 10.02.2011թ-ից ՀՀ կառավարությունը «Գայլերի թվաքանակի կարգավորման և միջոցառումների իրականացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 123-Ն որոշում է ընդունել, ըստ որի իրականացվելու էր գայլերի թվաքանակի կարգավորման միջոցառումներ:

Այս տարի նույնպես ՀՀ կառավարության 18.09.2014 թ. թիվ 977-Ա որոշումը՝ ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով ստեղծված Գայլերի թվաքանակի կարգավորման և միջոցառումների իրականացման հանձնաժողովը պետք է սկսեր գայլերի մորթիների ընդունման աշխատանքները:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն Հայաստանի հանրապետությունում գայլերի որսի հետ կապված.

- Կա՞ն արդյոք մոնիտորինգային տվյալներ Հայաստանի հանրապետության տարածքում գայլերի քանակի և բնակության աշխարհագրության մասին՝ նախկին տարիների և վերջին 4 տարիների համեմատականը /տրամադրել ցուցակն ըստ մարզերի և ըստ տարիների/
- Վերջին 4 տարիների ընթացքում որսված գայլերի թիվը /տրամադրել ցուցակն ըստ մարզերի և ըստ տարիների/

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալություն
Գավառի Օրհուս կենտրոնի համակարգող

Լ. Ասոյան